«30» մայիսի 2012թ.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՇՊԱԿ-ՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Հայաստանում գործող Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների և ընդունարանների (այսուհետ՝ ՇՊԱԿ) ցանցը, որոնք գործարկվում են «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (գործարկում է Երևանի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի, Արարատի, Շիրակի, Տավուշի, Վայոց Ձորի, Արագածոտնի ՇՊԱԿ-ները և Թալինի, Ապարանի հենակետային ընդունարանները), «Արմավիրի Զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության (գործարկում է Արմավիրի ՇՊԱԿ-ը), և Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի (գործարկում է Գեղարքունիքի ՇՊԱԿ-ը) կողմից, ի դեմս Կարեն Զադոյանի, Նաիրա Առաքելյանի և Արփինե Բաղդոյանի, մի կողմից, և Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամը (այսուհետ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ), ի դեմս գործադիր տնօրեն Վարազդատ Կարապետյանի՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր).

- ✓ *Կարևորելով Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտի շահերի պաշտպանության և ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների իրականացման անհրաժեշտությունը,*
- ✓ *Զգտելով հնարավորինս չափ նպաստել փոքր և միջին ձեռնարկությունների շահերի և իրավունքների ոտնահարման կանխարգելմանը ու որոշումների կայացման գործընթացում դրանց մասնակցության ապահովմանը,*
- ✓ *Գնահատելով ՇՊԱԿ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարի, իսկ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի դերը ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության բարձրացման գործում,*
- ✓ *Կարևորելով Հայաստանի ողջ տարածքում ՓՄՁ-ների իրավագիտակցության և իրազեկության բարձրացումը,*
- ✓ *Անհրաժեշտ համարելով ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված ընթացակարգային և համակարգային բարեփոխումների մշակումն ու այդ բարեփոխումների ընդունմանը նպաստելը,*
- ✓ *Ընդգծելով ՓՄՁ ոլորտում առաջացող հարաբերությունները կարգավորող արդեն ընդունված և ընդունվելիք նորմատիվ ակտերի վերաբերյալ կայացվող որոշումները հրապարակային և թափանցիկ դարձնելու, լուսաբանելու, ճիշտ ըմբռնելու ու կյանքի կոչելու գերակայությունը,*
- ✓ *Առաջնորդվելով օրենքի գերակայության և բարոյական վարքագծի հավասարակշռությամբ,*

Կնքեցին սույն Համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. Համաձայնագրի նպատակները

1.1. Կողմերը միավորում են ջանքերը հետևյալ նպատակներով՝

- Նպաստել ՓՄՁ ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,
- Աջակցել ՓՄՁ ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը,
- Բարձրացնել ՀՀ ողջ տարածքում փոքր և միջին ձեռնարկությունների իրազեկության և իրավագիտակցության մակարդակը,
- Նպաստել ՓՄՁ ոլորտում կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կատարմանը:

2. Համագործակցության հիմնական սկզբունքները

2.1. Սույն Համաձայնագիրը սահմանում է Կողմերի միջև համագործակցության հետևյալ սկզբունքները.

- Կողմերի միջև համագործակցությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն Համաձայնագրի դրույթների վրա,
- Համագործակցության ընթացքում Կողմերն առաջնորդվում են օրինականության, իրավաբանական օգնության իրավունքի ապահովման, օրենքի առջև հավասարության, համաղեկավարման, համապատասխան պատասխանատվության, թափանցիկության և ժողովրդավարության սկզբունքներով:

3. Համագործակցության ուղղությունները

3.1. Կողմերը համաձայնվում են իրականացնել հետևյալ գործունեությունը.

3.1.1. ՇՊԱԿ-ների ազգային ցանցը համաձայնվում է՝

- ՓՄՁ-ներին հնարավորություն ընձեռել արձանագրելու հանդիպած կոռուպցիոն դեպքերը և արձագանքել ստացված դիմումներին,
- Ապահովել անհրաժեշտ իրավական տեղեկատվության և անվճար խորհրդատվության տրամադրում, կոռուպցիոն ռիսկերի առկայության պարագայում իրականացնել ՓՄՁ-ների շահերի պաշտպանություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում, դատական ատյաններում,
- Բացահայտել ոլորտին առնչվող օրենսդրության և դրա կատարման, ինչպես նաև ընթացակարգերի թերությունները, որոնք տեղիք են տալիս կոռուպցիոն ռիսկերի առաջացման,
- Քննարկել և մշակել բարեփոխումների ռազմավարություններ, առաջարկներ, հետևել դրանց ընդունման գործընթացին:

3.1.2. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը համաձայնվում է՝

- Աջակցել ՇՊԱԿ-ների կողմից ՓՄՁ-ներին տրամադրվող այն տեղեկատվության ամբողջականացմանը, որն անմիջականորեն կապված է ՓՄՁ-ների բողոքներին առնչվող օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, կանոնակարգերով կամ ներքին փաստաթղթերով պայմանավորված ընթացակարգերի հետ,
- Հաշվի առնելով ՇՊԱԿ-ների և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մ/ճ-երի կողմից հավաքագրված և վերլուծված տեղեկատվությունը և ուսումնասիրությունները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում, համատեղ նախաձեռնել և մշակել կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային փոփոխություններ, հետամուտ լինել դրանց ընդունմանը,
- Տրամադրել ՇՊԱԿ-ներին ամբողջական տեղեկատվություն ՓՄՁ ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկեր հանդիպած ՓՄՁ-ներին և դրանց ներկայացուցիչներին ուղղորդել ՇՊԱԿ՝ գործին օրենքով սահմանված կարգով լուծում տալու նպատակով,
- ՇՊԱԿ-ների հետ համատեղ նախաձեռնել և անցկացնել տարածաշրջաններում ՓՄՁ-ների իրազեկմանն ուղղված աշխատանքներ, հանդիպում-քննարկումներ, ներկայացնել ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության ուղղությունները, ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցությունն ու քննարկել հնարավոր համագործակցությունը,
- Օժանդակել ՇՊԱԿ-ներին Երևանի և ՀՀ մարզերի փոքր և միջին ձեռնարկությունների ներկայացուցիչների և երիտասարդ իրավաբանների համար Երևանում և ՀՀ մարզերում արբիտրաժի վերաբերյալ իրազեկման սեմինարների կազմակերպմանը և անցկացման հարցում,
- Օժանդակել ՇՊԱԿ-ներին կազմակերպելու արբիտրներ վերապատրաստելու հատուկ ուսուցումներ,
- Նպաստել ՇՊԱԿ-ների և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային գրասենյակների միջև փոխգործակցության ապահովմանը:

3.1.3. Այլ դրույթներ

- Պարբերաբար աշխատանքային քննարկումներ կազմակերպել կողմերի ներկայացուցիչների, ՇՊԱԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ՓՄՁ-ների դիմումներին ընթացք տալու և դրանք բավարարելու օրենքով նախատեսված ընթացակարգերը ճշգրտելու օրակարգերով,
- Կողմերից որևէ մեկի առաջարկության դեպքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կամ ՇՊԱԿ-ների գրասենյակներում անցկացնել խորհրդակցություններ և քննարկումներ:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Սույն Համաձայնագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:

4.2. Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

4.3. Սույն Համաձայնագիրը կազմված է չորս էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.4. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՇՊԱԿ-ների ազգային ցանցի կողմից՝	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից՝
Կարեն Զաղոյան «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ Կ.S.	Վարազդատ Կարապետյան Գործադիր տնօրեն Կ.S.
Նաիրա Առաքելյան Արմավիրի զարգացման կենտրոնի գործադիր տնօրեն Կ.S.	
Արփինե Բաղդոյան Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի լիազոր ներկայացուցիչ Կ.S.	